BECOMING

Bookmark

Michelle Obama

BECOMING

Bookmark

Միշել Օբաման

BECOMING
ԻՄ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Թարգմանական խմբի ղեկավար՝
Լիանա Զաքարյան

Թարգմանությունն անգլերենից՝
Մոնիկա Կեսոյանի
Նարե Հարությունյանի
Անի Սիրեկանյանի
Գայանե Գրիգորյանի

ԵՐԵՎԱՆ
2020

Bookmark

ՀՏԴ 82-94
ԳՄԴ 84(7ԱՄՆ)
Օ-130

Օ-130 Օբամա Միշել
Becoming. Իմ պատմությունը/ Մ. Օբամա.- Եր.: Newmag, 2020.- 536 էջ:

Երբ Միշել Ռոբինսոնը փոքր աղջիկ էր, նրա աշխարհը սահմանափակվում էր Չիկագոյի Սաութ Սայդ թաղամասով: Այդտեղ նա ապրում էր երկհարկանի շենքի մի փոքրիկ բնակարանում՝ ննջասենյակը կիսելով եղբոր՝ Քրեյգի հետ: Շուտով կյանքը նրան տարավ շատ ավելի հեռու՝ Փրինսթոնի համալսարան, որտեղ առաջին անգամ սեփական մաշկի վրա զգաց, թե ինչ է նշանակում լինել լսարանում միակ սևամորթ կինը: Հետո հայտնվեց ապակեպատ մի աշտարակում, որտեղ աշխատում էր որպես կորպորատիվ իրավաբան: Ու հենց այնտեղ ամռան մի առավոտ նրա աշխատասենյակում հայտնվեց իրավաբանական ֆակուլտետի ուսանող Բարաք Օբաման ու գլխիվայր շուռ տվեց խնամքով մշակած նրա բոլոր ծրագրերը:

Գրքում Միշել Օբաման առաջին անգամ խոսում է իր ամուսնության վաղ շրջանի մասին, երբ ձգտում էր և՛ աշխատել, և՛ ընտանիքի հոգսերը հոգալ, և՛ նպաստել ամուսնու քաղաքական վերելքին: Նա անկեղծորեն պատմում է ընտանեկան վեճերի մասին, թե իր ամուսինը պե՞տք է առաջադրվի նախագահի թեկնածու, և թե ինչպես ինքը դարձավ քարոզարշավի ամենաճանաչված ու հաճախ քննադատված դեմքը, հետո էլ՝ ԱՄՆ առաջին տիկինը:

«Իմ պատմությունը» գիրքը պատմում է Այովա նահանգի համեստ բնակավայրերի ու Բուքինգհեմյան պալատի շքեղ սրահների մասին, պարուրում սրտամորմոք վշտով, սովորեցնում դիմակայել դժվարություններին: Իր կյանքի պատմությունը համարձակորեն շարադրելով՝ նա մարտահրավեր է նետում բոլորիս, որպեսզի մտածենք ու հասկանանք՝ ով ենք մենք և ինչի ենք ուզում հասնել:

ՀՏԴ 82-94
ԳՄԴ 84(7ԱՄՆ)

ISBN 978-9939-9217-8-5
Միշել Օբամա «Becoming. Իմ պատմությունը» © 2020, «Նյու Մեգ» ՍՊԸ
Becoming. Copyright © 2018 By Michelle Obama
This translation published by arrangement with Crown Publishing,
a part of Penguin Random House LLC

Այս գրքի հայերեն թարգմանության և հրատարակության իրավունքները պատկանում են «Նյու Մեգ» ՍՊԸ-ին: Թարգմանությունն իրականացվել է՝ համաձայն Crown Publishing ընկերության հետ կնքված պայմանագրի: Crown Publishing-ը մաս է կազմում Penguin Random House LLC ընկերության: Հայերեն հրատարակության իրավունքները ձեռք են բերվել ԱՐԻ գրական գործակալության միջոցով:

Նվիրում եմ բոլոր այն մարդկանց,
որոնք ինձ օգնել են դառնալ այն, ինչ կամ,
ծնողներիս՝ Ֆրեյզերին ու Մարիանին,
եղբորս՝ Քրեյգին, և իմ մեծ ընտանիքին,
ինձ շրջապատող ուժեղ կանանց, որոնք միշտ սատարում են ինձ,
իմ հավատարիմ ու նվիրված աշխատակիցներին,
որոնցով հպարտանում եմ:

Նվիրում եմ իմ կյանքի սերերին՝ Մալիային ու Սաշային՝
իմ երկու ձագուկներին, որոնք իմ կյանքի իմաստն են,
և վերջապես Բարաքին,
որն ինձ միշտ էլ հետաքրքիր ճամփորդություն է խոստացել:

Bookmark

Բովանդակություն

Նախաբան	**9**
Դառնալով Միշել	**15**
Գլուխ 1	16
Գլուխ 2	32
Գլուխ 3	48
Գլուխ 4	61
Գլուխ 5	73
Գլուխ 6	91
Գլուխ 7	109
Գլուխ 8	121
Դառնալով Օբամա	**137**
Գլուխ 9	138
Գլուխ 10	161
Գլուխ 11	177
Գլուխ 12	199
Գլուխ 13	213
Գլուխ 14	233
Գլուխ 15	253
Գլուխ 16	275
Գլուխ 17	302
Գլուխ 18	330
Դառնալով ավելին	**339**
Գլուխ 19	340
Գլուխ 20	364
Գլուխ 21	387
Գլուխ 22	408
Գլուխ 23	439
Գլուխ 24	470
Վերջաբան	**504**
Երախտագիտության խոսք	**509**
Լուսանկարների հեղինակները	**514**

Bookmark

Նախաբան

Մարտ, 2017

Երեխա ժամանակ պարզ ցանկություններ ունեի: Ուզում էի շուն ունենալ: Եվ տուն՝ ներսում աստիճաններ, երկհարկանի, մեկ ընտանիքի համար: Չգիտեմ ինչու հորս ուրախությունն ու հպարտությունը համարվող երկդռնանի «Բյուիկի» փոխարեն երազում էի ունենալ չորս դռնանի սեդան: Բոլորին ասում էի՝ երբ մեծանամ, մանկաբույժ եմ դառնալու: Ինչո՞ւ: Որովհետև սիրում էի փոքրիկների հետ ժամանակ անցկացնել ու շատ արագ գլխի էի ընկել, որ այդ պատասխանը դուր էր գալիս մեծահասակներին: «*Օ՛, բժիշկ: Ի՞նչ հրաշալի ընտրություն*»: Այդ ժամանակ հյուսիկներ էի կապում, ավագ եղբորս հրամաններ տալիս ու, անկախ ամեն ինչից, դպրոցում բարձր գնահատականներ ստանում: Զգտումներ ունեի, թեև չէի գիտակցում՝ կոնկրետ ինչի եմ հավակնում: Հիմա կարծում եմ, որ *«Երբ մեծանաս, ի՞նչ ես ուզում դառնալ»* հարցն ամենաանիմաստ հարցերից է, որ կարելի է տալ երեխաներին: Կարծես մեծանալը սահմաններ ունի, հասնում ես մի կետի, դառնում ինչ-որ բան և վերջ:

Մինչև այս պահն իրավաբան եմ եղել: Աշխատել եմ հիվանդանոցի փոխտնօրեն, հասարակական կազմակերպության տնօրեն, որն օգնում էր երիտասարդներին նշանակալի կարիերա կառուցել: Ես եղել եմ աշխատավոր դասի սևամորթ ուսանող, սովորել բարձրակարգ համալսարանում, որտեղ գերակշռում էին սպիտակամորթները: Շատ տեղերում եղել եմ միակ կինը, միակ աֆրոամերիկացին: Եղել եմ հարսնացու, մտահոգ մայր, վշտից կոտրված դուստր, իսկ մինչև վերջերս՝ Ամերիկայի Միացյալ Նահանգների առաջին տիկին: Դա պաշտոնապես իմ աշխատանքը չէր, սակայն ինձ համար ստեղծել էր այնպիսի հարթակ, որ անգամ պատկերացնել չէի կարող: Այն ինձ մարտահրավեր էր նետում ու ընկճում, բարձրացնում ու ցածնետում, երբեմն էլ՝ այդ բոլորը միաժամանակ: Նոր եմ սկսում վերլուծել, թե ինչ տեղի ունեցավ վերջին տարիներին՝ այն պահից ի վեր, երբ 2006-ին ամուսինս առաջին

անգամ հայտնեց նախագահական ընտրություններում իր թեկնածությունն առաջադրելու մասին, մինչև այս տարվա ձմռան այն ցուրտ առավոտը, երբ Մելանյա Թրամփի հետ նստեցի լիմուզին՝ նրան ուղեկցելու իր ամուսնու երդման հանդիսավոր արարողությանը: Հետաքրքիր փորձառություն էր:

Առաջին տիկնոջն Ամերիկան ներկայանում է իր բոլոր ծայրահեղություններով: Եղել եմ դրամահավաք կազմակերպողների առանձնատներում, որոնք արվեստի թանգարան էին հիշեցնում: Եղել եմ տներում, որտեղ լոգարանները պատրաստված էին թանկարժեք քարերից: Այցելել եմ ընտանիքների, որոնք Կատրինա փոթորկի ժամանակ կորցրել էին ամեն ինչ և հուզված ու երախտապարտ էին, որ գոնե աշխատող սառնարան ու ջեռոց ունեն: Առերեսվել եմ մակերեսային ու կեղծավոր անձանց, նաև ուրիշների՝ ուսուցիչների ու զինծառայող ամուսնական զույգերի և այլոց հետ, որոնց հոգու կորովն այնքան մեծ էր, որ անհնար էր չհիանալ: Հանդիպել եմ բազում երեխաների ամբողջ աշխարհում, որոնք զվարճացնում էին ինձ ու սիրտս հույսով լցնում, որոնք մոռանում էին կարգավիճակս, երբ սկսում էինք այգում հողի հետ խաղալ:

Հանրային կյանք հարկադրաբար ոտք դնելուց հետո ինձ մեծարել են որպես աշխարհի ամենաազդեցիկ կնոջ և անարգել՝ անվանելով «զայրացած սևամորթ կին»: Միշտ ցանկացել եմ ինձ զրպարտողներին հարցնել, թե այդ արտահայտության հատկապես ո՞ր մասն է նրանց համար ավելի կարևոր՝ «զայրացա՞ծը», «սևամո՞րթը», թե՞ «կինը»: Ժպտացել եմ այն մարդկանց հետ լուսանկարվելիս, որոնք ամուսնուս հասցեին սարսափելի բաներ էին ասում հեռուստատեսությամբ, բայց և այնպես ուզում էին շրջանակի մեջ մի լուսանկար ունենալ իրենց բուխարու վրա որպես հուշ դնելու համար: Կարդացել եմ իմ մասին համացանցում շրջանառվող տարատեսակ գրառումներ, որոնք հարցականի տակ էին դնում ամեն ինչ, ընդհուպ այն հարցը, թե արդյոք կի՞ն եմ, թե՞ տղամարդ: ԱՄՆ Կոնգրեսի անդամներից մեկը կատակներ էր անում հետույքիս մասին: Ինձ վիրավորել են, զայրացրել: Բայց հիմնականում փորձել եմ այդ ամենը ծիծաղի տալ:

Շատ բան կա, որ դեռ չգիտեմ Ամերիկայի մասին, կյանքի մասին, թե ինչ անակնկալներ կարող է ապագան մատուցել: Բայց գիտեմ, թե ով եմ

ես: Հայրս՝ Ֆրեյզերը, սովորեցրել է ինձ քրտնաջան աշխատել, հաճախ ծիծաղել և խոսքիս տերը լինել: Մայրս՝ Մերիանը, սովորեցրել է սեփական կարծիք ունենալ և ձայնս լսելի դարձնել: Չիկագոյի Սաութ Սայդ թաղամասում գտնվող մեր քարուքանդ բնակարանում նրանք ինձ օգնել են տեսնել մե՛ր պատմության, ի՛մ պատմության և մեր երկրի՛ պատմության արժեքավոր կողմերը: Նույնիսկ երբ այն գեղեցիկ կամ կատարյալ չէ: Նույնիսկ երբ այն ավելի իրական է, քան ուզում ես: Քո պատմությունը քեզ հետ է ու միշտ քեզ հետ է լինելու: Այն քեզ է պատկանում:

Ութ տարի շարունակ ապրել եմ Սպիտակ տանը, որտեղ ավելի շատ աստիճաններ կան, քան կարող ես հաշվել, ինչպես նաև վերելակներ, բոուլինգի ուղի և ֆլորիստ-դիզայներ: Քնում էի իտալական թավշյա սպիտակեղենի մեջ: Մեզ համար կերակուր էին պատրաստում աշխարհի լավագույն խոհարարները և մատուցում ավելի պրոֆեսիոնալ ու պատրաստված մատուցողներ, քան կարելի է հանդիպել որևէ հինգաստղանի հյուրանոցում կամ ռեստորանում: Գաղտնի ծառայության գործակալներն իրենց ականջակալներով, ատրճանակներով, դեմքի միտումնավոր ոչինչ չասող արտահայտությամբ կանգնում էին դռների առաջ՝ անելով ամեն ինչ, որ հեռու մնան մեր անձնական կյանքից: Մենք աստիճանաբար վարժվեցինք մեր նոր տան շքեղությանն ու այլոց մշտական, լուռ ներկայությանը:

Սպիտակ տան միջանցքներում մեր երկու դուստրերը գնդակ էին խաղում ու մագլցում տան բակում գտնվող ծառերը: «Թրիթի»[1] կոչվող սենյակում Բարաքը մինչև ուշ գիշեր աշխատում էր, ուսումնասիրում զեկույցներն ու ելույթների նախնական տարբերակները: Այստեղ մեր շնիկներից մեկը՝ Սանին, երբեմն կեղտոտում էր գորգի վրա: «Թրումեն» պատշգամբում[2] կանգնած դիտում էի, թե ինչպես են զբոսաշրջիկները՝ սելֆիի ձողերը ձեռքներին, լուսանկարվելու դիրք ընդունում, հետո էլ փորձում հասկանալ, թե ինչ է կատարվում երկաթյա ցանկապատից այն

[1] The Treaty Room – բառացի թարգմանվում է «Համաձայնագրի սենյակ»: Գտնվում է Սպիտակ տան 2-րդ հարկում և համարվում է ԱՄՆ նախագահի ընտանիքի մասնավոր հատվածը: Այն նախագահին ծառայում է որպես աշխատելու և ուսումնասիրություններ անելու սենյակ: (Ծանոթագրությունները՝ **new**mag-ի):

[2] The Truman Balcony – 2-րդ հարկի հայտնի պատշգամբը, որից երևում է Սպիտակ տան այգու հարավային հատվածը: Կառուցվել է նախագահ Հարի Թրումենի ժամանակ՝ 1948 թ.: Հենց նրա անունով էլ այն կոչվում է:

կողմ: Օրեր էին լինում, երբ շնչահեղձ էի լինում միայն այն մտքից, որ մեր պատուհանները միշտ պետք է փակ լինեն՝ անվտանգության նկատառումներից ելնելով, ու որ չէի կարող մաքուր օդ շնչել՝ առանց իրարանցում առաջացնելու: Լինում էին պահեր, երբ, այգու սպիտակ մագնոլիաների ծաղկումը տեսնելիս, բերկրանք էի ապրում, կառավարության առօրյա իրարանցումից նյարդայնանում էի, իսկ զինծառայողների հուժկու ողջույնը սիրտս ակնածանքով էր լցնում: Լինում էին օրեր, շաբաթներ և ամիսներ, երբ պարզապես ատում էի քաղաքականությունը: Լինում էին նաև ակնթարթներ, երբ, այս երկրի ու նրա ժողովրդի գեղեցկությունից ապշած, բառ անգամ չէի կարողանում արտաբերել:

Հետո ամեն ինչ ավարտվեց: Նույնիսկ երբ գիտես, որ վերջը մոտ է, ու վերջին շաբաթներդ լցվում են հուզիչ հրաժեշտներով, այդ օրն ինքնին դեռ մշուշոտ է մնում: Ինչ-որ մեկի ձեռքը նորից հայտնվում է Աստվածաշնչի վրա, ու երդումը կրկնվում է: Մի նախագահի կահույքը փոխարինվում է մեկ այլ նախագահի կահույքով: Պահարանները դատարկվում են և հաշված ժամերի ընթացքում նորից լցվում: Նոր բարձերի վրա նոր գլուխներ են դրվում, նոր խառնվածքներ, նոր երազանքներ: Եվ երբ վերջանում է ամեն ինչ, երբ վերջին անգամ դուրս ես գալիս աշխարհի ամենահայտնի տան դռնից, շատ առումներով ստիպված ես լինում վերագտնել քեզ:

Թույլ տվեք պատմել վերջերս տեղի ունեցած մի դեպք: Ես կարմիր աղյուսից կառուցած մեր նոր տանն էի, ուր վերջերս էինք տեղափոխվել: Այն մեր հին տնից երեք կիլոմետր հեռավորության վրա է, անաղմուկ մի փողոցում: Դեռ վերջնական չէինք տեղավորվել: Ճաշասենյակում կահույքը դասավորել էինք այնպես, ինչպես Սպիտակ տանն էր: Տանը բազմաթիվ հուշանվերներ ունեինք, որոնք հիշեցնում էին, որ այդ ամենն իրական է եղել՝ Քեմփ Դեյվիդում[3] անցկացրած օրերից ընտանեկան լուսանկարներ, բնիկ ամերիկացի ուսանողների նվիրած ձեռագործ իրեր, Նելսոն Մանդելայի ստորագրությամբ գիրք: Այդ երեկոն անսովոր էր. տանը մենակ էի: Բարաքը ճանապարհորդում էր: Սաշան ընկերների հետ գնացել էր զվարճանալու: Մալիան էլ որոշել էր նախքան քոլեջ ընդունվելը մեկ տարի ապրել ու աշխատել Նյու Յորքում: Տանը ես էի և մեր

[3] Camp David – հատուկ ամառանոց ԱՄՆ նախագահների համար:

երկու շները: Այնպիսի լռություն ու դատարկություն էր, որ վերջին 8 տարվա մեջ չէի զգացել:

Քաղցած էի: Շների ուղեկցությամբ մեր ննջասենյակից իջա ներքևի հարկ: Բացեցի սառնարանը, մի բոքոն հաց գտա, երկու կտոր կտրեցի ու դրեցի տոստերի մեջ: Բացեցի պահարանը, ափսե վերցրի: Գիտեմ, որ տարօրինակ է հնչում, բայց խոհանոցում պահարանից ափսե վերցնելն առանց որևէ մեկի օգնության ու պնդելու, որ կանեն դա քո փոխարեն, կանգնել ու հետևել, թե ինչպես է հացը չորանում տոստերի մեջ, վերադարձ էր թվում իմ հին կյանք: Կամ էլ գուցե դա իմ նոր կյանքի սկիզբն էր:

Ի վերջո, ես ոչ թե ընդամենը տոստ պատրաստեցի, այլ պանրով տոստ: Հացի կտորները միկրոալիքային վառարան դրեցի և նրանց միջև հալեցրի փափուկ չեդերի մի հաստ կտոր: Հետո վերցրի ափսես ու դուրս եկա այգի: Այլևս պարտավոր չէի որևէ մեկին զգուշացնել, որ դուրս եմ գալիս: Բոբիկ էի, հագիս էլ՝ կարճ տաբատ: Ձմռան ցուրտ շունչը կոտրվել էր: Ձնծաղիկները սկսել էին գլուխները բարձրացնել: Գարնան շունչն արդեն զգացվում էր: Նստեցի պատշգամբի աստիճաններին՝ ոտքերիս տակ զգալով արևի շողերից ջերմացած հողը: Հեռվում շուն հաչեց: Իմ շներն ականջները սրեցին, կարծես մի պահ շփոթվել էին: Մտքովս անցավ, որ այդ ձայնն ապշեցրել է նրանց. չէ՞ որ Սպիտակ տանը հարևաններ չունեինք, ուր մնաց թե հարևան շուն: Նրանց համար ամեն ինչ նոր էր: Մինչ շներն այգին էին ուսումնասիրում ու չափչփում, կերա իմ տոստը՝ զգալով հաճելի միայնություն: Ես չէի մտածում ինձնից 90 մետր այն կողմ գտնվող զինված թիկնապահների մասին, որոնք նստում էին մեր ավտոտնակում հատուկ կառուցված պահակակետում, ոչ էլ այն մասին, որ առանց թիկնապահի չեմ կարող նույնիսկ փողոցում քայլել: Ես չէի մտածում նոր կամ, առավել ևս, հին նախագահի մասին:

Փոխարենը մտածում էի, որ բոպեներ անց ներս եմ մտնելու իմ տուն, լվացարանում լվանալու եմ ափսես, բարձրանալու եմ ննջասենյակ, գուցե պատուհանը բացեմ ու մի քիչ գարնան մաքուր օդ շնչեմ: Ի՜նչ հրաշալի կլինի: Նաև մտածում էի, որ այդ հանգստությունն ինձ առաջին անգամ հնարավորություն է տալիս խորհրդածելու: Երբ առաջին տիկին էի, մի կերպ ավարտում էի ծանր շաբաթն ու փորձում հիշել՝ ինչպես էր այն սկսվել: Սակայն ամեն ինչ սկսում է փոխվել: Մեր դուստրերը, որոնք Սպիտակ տուն էին եկել՝ բերելով իրենց տիկնիկները, վերմակները,

որոնք անվանում էին «Բլենքի», «Վագր» անունով փափուկ խաղալիքը, հիմա արդեն երիտասարդ կանայք են, ունեն իրենց նպատակներն ու սեփական կարծիքը: Ամուսինս նույնպես Սպիտակ տնից հետո փորձում է հարմարվել նոր կյանքին: Իսկ ես այստեղ եմ, այս նոր վայրում և ասելու շատ բան ունեմ:

Bookmark

Դառնալով Միշել

Bookmark